

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-18/24-I/IMB

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արսեն Արտաշեսի Առաքելյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 308 070 760 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 308 070 760 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա

Կազմակերպություն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ»
ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24
Հ/հ' 900011024115
ՀՎՀՀ՝ 00005673
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Նախագահ՝


(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար




(ստորագրություն)

ՀՀ, Երևան, Է. Հասրաթյան 7
Հ/հ' 900018005273
ՀՎՀՀ՝ 00008732
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Արսեն Արտաշեսի Առաքելյան



Մարտիկյան Արսեն Արտաշեսի

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Արսեն Արտաշեսի Առաքելյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-18/24-1/IMB պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 308 070 760 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝

(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ



Կազմակերպություն

տնօրեն՝

(ստորագրություն)


Արսեն Արտաշեսի Առաքելյան



ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
 «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	33
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	2
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	5
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	2
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	0
Գրքեր, մենագրություններ՝	0
Գիտաժողովի նյութեր՝	15
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝


 (ստորագրություն)

Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության գիտքարտուղար՝


 (ստորագրություն)

Խաչատրյան Զարուհի Աշոտի



ՆԱԽԱՀԱՇԻՎ
 «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Որս»

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	271 599 210	54 319 842	67 899 802	67 899 802	81 479 764
2.	տնտեսական ծախսեր՝	35 400 000	7 080 000	8 850 000	8 850 000	10 620 000
3.	այլ ծախսեր՝	1 071 550	214 310	267 887	267 887	321 466
Ընդամենը՝		308 070 760	61 614 152	77 017 689	77 017 689	92 421 230

Կազմակերպության տնօրեն՝

(ստորագրություն)

Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(ստորագրություն)

Լիլիթ Մուշեղի Մելքոնյան



ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

«Ղրամ»

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	35 400 000
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	15 500 000
2.	գազի ծառայություն	6 000 000
3.	ջրամատակարարման ծառայություն	450 000
4.	կապի ծառայություն	1 500 000
5.	աղբահանություն	550 000
6.	այլ կոմունալ և տնտեսական վճարներ	400 000
7.	էներգախնայողության ծառայության մատուցում	11 000 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	1 071 550
1.	սարքեր և սարքավորումներ, նյութեր	390 000
2.	գրենական, տնտեսական ապրանքներ	100 000
3.	այլ ծախսեր	581 550

Կազմակերպության տնօրեն՝

(ստորագրություն)

Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

(ստորագրություն)

Լիլիթ Մուշեղի Մելքոնյան



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

- A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
- B - ամիսների քանակ E - գումարային
- C - աշխատաժամանակի ռեժիմ

«Ղրամ»

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչապատասխանի անձնակազմ						
Առաքելյան Արսեն Արտաշեսի	տնօրեն	450 000	12	ներքին համատեղություն	40	5 400 000
Յակնտովա Գոհար Վասիլիի	գիտական գծով փոխտնօրեն	400 000	12	ներքին համատեղություն	40	4 800 000
Խաչատրյան Զարուհի Աշոտի	գիտական քարտուղար	300 000	12	ներքին համատեղություն	40	3 600 000
Պոլիխատկո Բորիս Վլադիմիրի	տնտեսական գծով փոխտնօրեն	400 000	12	հիմնական	40	4 800 000
Մելիքսեթյան Գոհար Հովհաննեսի	կադրերի մասնագետ	300 000	12	հիմնական	40	3 600 000
Մարդույան Սոնա Սերգեյի	տնօրենի օգնական	300 000	12	հիմնական	40	3 600 000
Հովակիմյան Հրաչուհի Ռոբերտի	տնտեսական գծով փոխտնօրենի օգնական	125 000	12	հիմնական	40	1 500 000
Մելքոնյան Լիլիթ Մուշեղի	գլխավոր հաշվապահ	400 000	12	համատեղություն	20	4 800 000
Հայրապետյան Նարինե Հովհաննեսի	գեոմետրի համակարգող	350 000	12	հիմնական	40	4 200 000
Հովհաննիսյան Զուլիխտա Արթուրի	հաշվետար	200 000	12	հիմնական	40	2 400 000
Գևորգյան Կարինե Ռաֆայելի	քաղաքաշտապետության շտաբի պետ	55 000	12	համատեղություն	20	660 000
Եզրիկյան Գրիգորի Շավարշի	գլխավոր ճարտարագետ	270 000	12	հիմնական	40	3 240 000
Նավոյան Գագիկ Զավենի	պլաներ, վարորդ-մատակարար	205 000	12	հիմնական	40	2 460 000
Հարությունյան Համլետ Սարգսի	ինժեներ էլեկտրիկ	150 000	12	հիմնական	40	1 800 000
Բորջախյան Հռիփսիկ Առաքելի	լաբորանտ	25 000	12	հիմնական	10	300 000
Հովակիմյան Ռոբերտ Գրիգորի	տարաբանվոր	175 000	12	հիմնական	40	2 100 000
Կիրակոսյան Դավիթ Աշոտի	տարաբանվոր	150 000	12	հիմնական	40	1 800 000
Թովմասյան Արսեն Վազգենի	տարաբանվոր	175 000	12	հիմնական	40	2 100 000
Հովակիմյան Գրիգոր Ռոբերտի	տարաբանվոր	125 000	12	հիմնական	40	1 500 000
Զաքարյան Հարություն Արշավիրի	տարաբանվոր	125 000	12	հիմնական	40	1 500 000
Մամյան Գևորգ Սարգսի	պահակ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Զավադյան Ժորա Ավագի	պահակ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Ղազանջյան Միհրան Գևորգի	պահակ	120 000	12	հիմնական	40	1 440 000
	պահակ			հիմնական		

Բասեյան Արթուր Ասատուրի		120 000	12		40	1 440 000
Աբաջյան Ալվարդ Գրիգորի	հավաքարար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հովակիմյան Վարդուհի Ռոբերտի	հավաքարար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հովակիմյան Երանուհի Խաչիկի	հավաքարար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Եզորովա Ելիզավետա Գեորգիի	հավաքարար	135 000	12	հիմնական	40	1 620 000
Բաղդասարյան Արմեն Արտյոմի	վերելակների սպասարկող	60 500	12	հիմնական	20	726 000
Գիտական անձնակազմ						
Լաբորատորիա Մարդու գենոմիկայի						
Առաքելյան Արսեն Արտաշեսի	Ղեկավար	0	12	ներքին համատեղություն	0	0
Մայիլյան Կարինե Ռաֆիկի	Ավագ գիտաշխատող	300 294	12	հիմնական	40	3 603 528
Մկրտչյան Գոհար Մարատի	Ավագ գիտաշխատող	300 294	12	հիմնական	40	3 603 528
Զախարյան Ռոբսանա Վլադիսլավի	Ավագ գիտաշխատող	150 147	12	համատեղություն	20	1 801 764
Ստեփանյան Անի Սմբատի	Ավագ գիտաշխատող	300 294	12	հիմնական	40	3 603 528
Աճենյան Սոֆի Արմանի	Գիտաշխատող	57 545	12	համատեղություն	10	690 540
Հայրապետյան Վարդուհի Հովհաննեսի	Գիտաշխատող	115 089	12	հիմնական	20	1 381 068
Ղազարյան Հովսեփ Կարապետի	Գիտաշխատող	57 545	12	հիմնական	10	690 540
Զավուշյան Անդրանիկ Ստեփանի	Գիտաշխատող	115 089	12	հիմնական	20	1 381 068
Մարտիրոսյան Գևորգ Վոլոդյայի	Գիտաշխատող	115 089	12	հիմնական	20	1 381 068
Մելքոնյան Անի Հայկի	Կրտսեր գիտաշխատող	44 977	12	հիմնական	10	539 724
Մինասյան Արփինե Դավիթի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Սիրունյան Թամարա Կարենի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Խաչատրյան Գիսանե Վահագնի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Անտոնյան Շուշանիկ Արթուրի	Ավագ լաբորանտ	0	12	հիմնական	40	0
Ղուկասյան Լիլիթ Գոռի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Լաբորատորիա Մանրէների գենոմիկայի						
Սեդրակյան Անահիտ Միքայելի	Ղեկավար	449 806	12	հիմնական	40	5 397 672
Հովհաննիսյան Ալվարդ Իլիասի	Գիտաշխատող	115 089	12	հիմնական	20	1 381 068
Առաքելովա Կարինե Ավետիքի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Զախարյան Մագդալինա Կարենի	Կրտսեր գիտաշխատող	89 953	12	ներքին համատեղություն	20	1 079 436
Հակոբյան Շողիկ Սարգսի	Ավագ լաբորանտ	78 047	12	համատեղություն	20	936 564
Լաբորատորիա Էվոլյուցիոն գենոմիկայի						
Եպիսկոպոսյան Լևոն Միխայելի	Ղեկավար	449 806	12	հիմնական	40	5 397 672
Խաչատրյան Զարուհի Աշոտի	Ավագ գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	0	0
Մկրտչյան Սաթենիկ Լևոնի	Ավագ լաբորանտ	156 093	12	հիմնական	40	1 873 116
Գրիգորյան Արփինե Արկադիի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284

Մաթևոսյան Սյուզաննա Վարդանի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Նազարյան Գայանե Ռուդիկի	Լաբորանտ	59 857	11	հիմնական	20	658 427
Խումբ Բույսերի գենոմիկայի						
Մարգարյան Քրիստինե Սերյոժայի	Ղեկավար	349 918	12	հիմնական	40	4 199 016
Մելյան Գայանե Հրանտի	Գիտաշխատող	115 089	12	համատեղություն	20	1 381 068
Գրիգորյան Բելլա Արկադիի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Արմինե Ասատրյան Դերենիկի	Գիտաշխատող	115 089	12	հիմնական	20	1 381 068
Դավաթյան Լիլիթ Վիկտորի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Լաբորատորիա Փորձարարական կենսաբանության						
Յականովա Գոհար Վասիլիի	Ղեկավար	0	12	ներքին համատեղություն	0	0
Այվազյան Վիդեա Արտաշեսի	Ավագ գիտաշխատող	300 294	12	հիմնական	40	3 603 528
Հովսեփյան Լաուրա Միքայելի	Ավագ գիտաշխատող	150 147	12	հիմնական	20	1 801 764
Ներսեսովա Լյուդմիլա Ստեփանի	Ավագ գիտաշխատող	300 294	12	հիմնական	40	3 603 528
Գազարյանց Մարինա Գուրգենի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Զանգինյան Հասմիկ Վլադիմիրի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Ղազարյան Գայանե Սուրենի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Պողոսյան Լինա Հենրիկի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Հարությունյան Քրիստինե Սուրենի	Կրտսեր գիտաշխատող	179 906	12	հիմնական	40	2 158 872
Կարապետյան Միքայել Հայկի	Ավագ լաբորանտ	78 047	12	համատեղություն	20	936 564
Հովակիմյան Անի Աշոտի	Ավագ լաբորանտ	156 093	12	հիմնական	40	1 873 116
Թորոսյան Հասմիկ Վարդանի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Ղազարյան Մարիա Էդգարի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Լաբորատորիա Բջջային տեխնոլոգիաների						
Բաբայան Նելլի Սամվելի	Ղեկավար	449 806	12	հիմնական	40	5 397 672
Գրիգորյան Ռուզաննա Միշայի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Սարգսյան Նատալյա Կոնստանտինի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Խոնդկարյան Լուսինե Հերբերտի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Գրիգորյան Նարինե Յուրիի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Թադևոսյան Գոհար Լյովայի	Կրտսեր գիտաշխատող	179 906	12	հիմնական	40	2 158 872
Ապրեսյան Լիլիթ Սահակի	Կրտսեր գիտաշխատող	179 906	12	հիմնական	40	2 158 872
Մանուկյան Ալիսա Թադևոսի	Ավագ լաբորանտ	117 070	12	հիմնական	30	1 404 840
Լաբորատորիա Բջջի կենսաբանության և վիրուսաբանության						
Կարայան Զավեն Ալեքսանդրի	Ղեկավար	449 806	12	հիմնական	40	5 397 672
Կարալովա Ելենա Միքայելի	Առաջատար գիտաշխատող	210 011	12	հիմնական	20	2 520 132
Աբրոյան Լիանա Օնիկի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136

Ավետիսյան Աիդա Սերգեի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Հակոբյան Լինա Հայրապետի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Սեմերջյան Զատա Բաբկենի	Գիտաշխատող	115 089	12	հիմնական	20	1 381 068
Ոսկանյան Հենրիկ Եղիշեի	Գիտաշխատող	115 089	12	համատեղություն	20	1 381 068
Ավագյան Հրանուշ Ռոբերտի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Առաքելովա Էլինա Ալեքսանդրի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Հակոբյան Սոնա Արմենի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Գևորգյան Վահագն Սմբաթի	Գիտաշխատող	57 545	11	հիմնական	10	632 995
Արզումանյան Հրանուշ Հարությունի	Կրտսեր գիտաշխատող	89 953	12	հիմնական	20	1 079 436
Բայրամյան Նանե Վաչեի	Կրտսեր գիտաշխատող	134 930	12	հիմնական	30	1 619 160
Պողոսյան Արփինե Արմենի	Կրտսեր գիտաշխատող	89 953	12	հիմնական	20	1 079 436
Բաղդասարյան Բագրատ Վահագնի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Լաբորատորիա Հակավիրուսային դեղամիջոցների հայտնաբերման						
Զաքարյան Հովակիմ Սարգսի	Ղեկավար	449 806	12	հիմնական	40	5 397 672
Հակոբյան Աստղիկ Վարդանի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Իզմաիլյան Ռոզա Արտաշեսի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Գրիգորյան Ռաֆայելա Խորենի	Ավագ լաբորանտ	156 093	12	հիմնական	40	1 873 116
Շավինա Անաստասիյա Ալեքսանդրովնա	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Մանուկյան Անահիտ Համբարձումի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Բեգլարյան Արմինե Արմենի	Ավագ լաբորանտ	39 023	12	հիմնական	10	468 276
Ղազարյան Արթուր Սեմիկի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
Լաբորատորիա Մոլեկուլաբջջային իմունաբանության						
Մանուկյան Գայանե Փաշիկի	Ղեկավար	449 806	12	հիմնական	40	5 397 672
Պողոսյան Ղավիթ Ալեքերտի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Մարգարյան Սոնա Մովսեսի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Մարտիրոսյան Անուշ Արամի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136
Ղոնյան Մուսաննա Արամի	Ավագ լաբորանտ	156 093	12	հիմնական	40	1 873 116
Խումբ Մոլեկուլային նյարդակենսաբանության						
Վարդանյան Վիտյա Անդրանիկի	Ղեկավար	349 918	12	հիմնական	40	4 199 016
Կարապետյան Տաթևիկ Հրաչյայի	Ավագ լաբորանտ	78 047	12	համատեղություն	20	936 564
Մկրտչյան Լիանա Էդվարդի	Ավագ լաբորանտ	156 093	12	հիմնական	40	1 873 116
Լաբորատորիա Կենսագործընթացների համակարգչային մոդելավորման						
Նազարյան Կարեն Բաբկենի	Ղեկավար	224 903	12	հիմնական	20	2 698 836
Առաքելով Գրիգոր Գալուստի	Ավագ գիտաշխատող	300 294	12	հիմնական	40	3 603 528
Առաքելով Վահրամ Գալուստի	Գիտաշխատող	230 178	12	հիմնական	40	2 762 136

Մուրադյան Նելլի Գևորգի	Կրտսեր գիտաշխատող	179 906	12	հիմնական	40	2 158 872
Պարոնյան Ադրինե Կարենի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Սարգսյան Արսեն Արթուրի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Ծատուրյան Տիգրան Բագրատի	Ավագ լաբորանտ	78 047	12	հիմնական	20	936 564
Խումբ Կենսաինֆորմատիկայի						
Առաքելյան Արսեն Արտաշեսի	Ղեկավար	0	12	ներքին համատեղություն	0	0
Հակոբյան Սիրաս Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	179 906	12	հիմնական	40	2 158 872
Նիկողոսյան Մարիյա Արմենի	Կրտսեր գիտաշխատող	179 906	12	հիմնական	40	2 158 872
Դավիթավյան Սուրեն Սամվելի	Կրտսեր գիտաշխատող	89 953	12	հիմնական	20	1 079 436
Հակոբյան Մելինե Անդրանիկի	Կրտսեր գիտաշխատող	89 953	12	հիմնական	20	1 079 436
Բարեղամյան Եվա Վարուժանի	Կրտսեր գիտաշխատող	44 977	12	հիմնական	10	539 724
Ալխազյան Մարիամ Մարտինի	Ավագ լաբորանտ	78 047	12	համատեղություն	20	936 564
Խումբ Միկրոբիոմի հետազոտությունների						
Ներսիսյան Լիլիթ Ռոբերտի	Ղեկավար	349 918	12	հիմնական	40	4 199 016
Զախարյան Մագդալինա Կարենի	Կրտսեր գիտաշխատող	89 953	12	ներքին համատեղություն	20	1 079 436
Վարդազարյան Նելլի Էդուարդի	Ավագ լաբորանտ	156 093	12	հիմնական	40	1 873 116
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						0
Ընդհանուր գումար՝						271 599 210

Կազմակերպության տնօրեն՝

(ստորագրություն)

Արսեն Արտաշեսի Առաքելյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման
ստորաբաժանման ղեկավար՝

(ստորագրություն)

Գրիգոր Վելյուկանյան
(ԱԱՀ)



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում: Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանում, պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրություն, բնական և սինթետիկ ակտիվ նյութերի ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտություն, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Շենքային պայմանների պահպանում, կոմունալ պայմանների ապահովում, կոմունալ վճարների ժամանակին կատարում: Բազային, դրամաշնորհային և թեմատիկ ֆինանսավորման ծրագրերի շրջանակում իրականացվող հետազոտությունների վարչարարական աջակցություն և աշխատանքային պայմանների ապահովում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Ենթակառուցվածքի պահպանման շրջանակներում նախատեսվում է ապահովել էլեկտրաէներգիայի, ջրի, ջեռուցման անխափան աշխատանք, սարքերի աշխատանքային վիճակ, հետազոտությունների ամփոփման համար նվազագույն պարագաների և նյութերի ձեռքբերում՝ ընթացիկ հետազոտությունների և դրամաշնորհային ծրագրերի իրականացման նպատակով:

Մարդու և կենդանիների վտանգավոր բազմագործոն բնույթի հիվանդությունների ծագման, զարգացման և բարդացման հիմքում ընկած մոլեկուլաբջջային պաթոմեխանիզմների պարզաբանման շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են.

- Ճառագայթման կենդանական մոդելների վրա իրականացնել *in vivo* և *ex vivo* հետազոտություններ՝ գերկարճ իմպուլսներով էլեկտրոնային ճառագայթմամբ հրահրված գենետիկական խաթարումների բացահայտման նպատակով:
- Գնահատել ունատոիդ արթրիտով (ՌԱ) հիվանդների սինովիալ հեղուկից անջատված իմունային բջիջների դերը հոդային հյուսվածքի դեգեներատիվ գործընթացների ժամանակ՝ որոշելու, թե սինովիալ հեղուկի բջջային որ ենթատեսակներն են ազդում ֆիբրոբլաստների և քոնդրոցիտների պրոլիֆերացիայի, ակտիվացման և ձերացման վրա:

- Ուսումնասիրել աուտոբորբոքային գործընթացների զարգացումը խթանող պիրինային ինֆլամասոմի ակտիվացման մոլեկուլային գործոնները:
- Ուսումնասիրել KCNQ5 կալիումական անցուղիների մուտացիաների հետևանքով առաջացող նյարդային համակարգի հիվանդությունների ախտաբանական մեխանիզմները Xenopus հետերոլոգ էքսպրեսիոն համակարգում՝ բացահայտելու մինչև այժմ գոյություն ունեցող 30 մուտացիաների հետևանքով առաջացած սպիտակուցի ֆունկցիոնալ խանգարումները, մասնավորապես՝ անցուղիների դարպասման, թափանցելիության, ընտրողականության և էքսպրեսիայի հետ կապված խնդիրները:
- Ուսումնասիրել խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի (ԽԱԺՎ) ախտաբանական մեխանիզմները, մասնավորապես՝ վիրուսի ազդեցությամբ թիրախային մակրոֆագերի բջջային ցիկլի շեղումները, ինչպես նաև ախտաբանական այդ գործընթացում ներգրավված վիրուսային գեները և բջջային սպիտակուցները: ԽԱԺՎ-ի վերարտադրության վաղ փուլի house-keeping գեների տրանսկրիպցիոն ակտիվության վերլուծություն: Ուսումնասիրել ԽԱԺՎ-ի հնարավոր երկարատև պահպանման առանձնահատկությունները, հնարավոր էկոլոգիական շտեմարանները, որոնք կարող են ներգրավված լինել անտառային ցիկլից դուրս վիրուսի շրջանառության մեջ:
- Ուսումնասիրել Հայաստանում առավել տարածված բակտերիալ ծագման աղիքային վարակների հարուցիչների հակամանրէային կայունության մեխանիզմները, ինչպես նաև կայունության ձևավորմանը և տարածմանը նպաստող շարժական գենետիկական տարրերի դերը՝ հակամանրէային թերապիայի մոտեցումները բարելավելու նպատակով:
- Հայաստանում տարածված սալմոնելոզի հարուցիչների վիրուլենտությունը պայմանավորող գենետիկական տարրերի բնութագրում ամբողջական գենոմի վերլուծության հիման վրա:
- Հայաստանում առավել տարածված բակտերիալ աղիքային վարակների հարուցիչների և նրանց նկատմամբ ակտիվություն ցուցաբերող բակտերիոֆագերի լաբորատորիայում առկա հավաքածուների պահպանում և համալրում:
- Հայաստանում անջատված բակտերիոֆագերի հիման վրա ստեղծված պատրաստուկների՝ աղիքային վարակների հարուցիչների նկատմամբ արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված աշխատանքներ:

Պոպուլյացիաների գենոմի ուսումնասիրության շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են՝

- Արցախի վերին քարեդարյան Քարին Տակ քարանձավի 2018-2020 թվականների պեղումների ընթացքում հավաքագրված բրածո ոսկորներում պահպանված կենսաբանական մարկերների մոլեկուլային նույնականացում և վերլուծություն:
- Իրականացնել հնէաբանական պեղումներ Հոստուն հնավայրում (Վայոց Ձոր)՝ բրածո մնացորդների հավաքածու կազմելու և հետագա հետազոտության համար:

- Շարունակվելու է հանրապետության տարածքում շրջանառող կորոնավիրուսի գենատարբերակների մոլեկուլագենետիկական մշտադիտարկումը:
- Ուսումնասիրել հայկական պոպուլյացիայում քրոնիկ հիվանդությունների հետ ասոցացված գենետիկական վարիանտների հաճախականությունները գենոմի մակարդակով:
- Իրականացնել խաղողի տեղածին սորտերի և վայրի գենոտիպերի հետազոտություններ՝ միտված գենետիկական բազմազանության հայտնաբերմանը, բնութագրմանը և պահպանմանը ազգային կոլեկցիոն այգում: Պլանավորված ուսումնասիրությունների առանցքում կլինեն նաև որակական և քանակական հատկանիշների ֆունկցիոնալ գենոմիկան, արբիտիկ (ցրտա- և չորադիմացկանության նկատմամբ ռեզիստենտ գեների ուսումնասիրություն) և բիոտիկ (որոշ պաթոգենների, վիրուսային հիվանդությունների նկատմամբ ռեզիստենտ գենոտիպերի հայտնաբերում) գործոնների նկատմամբ ռեզիստենտության/տոլերանտության գնահատումը:

Բնական և սինթեզված ակտիվ նյութերի ազդեցության կենսաբանական էֆեկտների և մեխանիզմների հետազոտության շրջանակներում նախատեսվող հետազոտական խնդիրներն են՝

- Ուսումնասիրել հակաբորբոքային ակտիվություն ունեցող բնական ծագման միացությունների հակավիրուսային ակտիվությունը խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի նկատմամբ: Այդ նպատակով իրականացվելու է 115 միացության լայնածավալ սկրինինգ, որից հետո ուսումնասիրվելու են ամենաբարձր ակտիվություն ունեցող միացությունների ազդեցության մեխանիզմները:
- Մարդու գրիպի վիրուսի օգելտամիվիր զգայուն և կայուն շտամերի նկատմամբ հակավիրուսային նոր միացությունների *in silico* նախազծում և *in vitro* փորձարկում:
- Մոլեկուլային մոդելավորման և մոլեկուլային դինամիկայի սիմուլյացիայի մեթոդների միջոցով ուսումնասիրել 14-3-3 սպիտակուցի հոմո- և հետերոդիմեր կառուցվածքների ձևավորման վրա տարբեր 14-3-3-ի իզոֆորմների ազդեցությունը:
- Ուսումնասիրել ԴՆԹ-ի ինդուկցված վնասվածքների վերականգնման կինետիկական մարդու քաղցկեղային և առողջ բջիջներում, ինչպես նաև հետազոտել քաղցկեղային բջիջներում ինդուկցված տարբեր մակարդակի ԴՆԹ-ի վնասվածքների վերականգնման էպիգենետիկական կարգավորման օրինաչափությունները: Այդ նպատակով իրականացվելու է գեն-սպեցիֆիկ մեթիլացման վերլուծություն ռեպարացիոն ուղիների ակտիվացման համար պատասխանատու գեների (*MGMT*, *MLH1*, *ERCC1*, *RBBP8/CtIP* և այլ) համար:

Կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններն ուղղված են ախտորոշիչ թեստ համակարգերի մշակմանը, նախակլինիկական և թունաբանական փորձարկումների իրականացմանը՝ արտահանման ենթակա ապրանքատեսակների սերտիֆիկացիայի համար պետական հավատարմագրման մարմնին ներկայացնելու նպատակով,

ինչպես նաև կենսաբանական նմուշների, նմուշառման պարագաների, ախտորոշիչ հավաքածուների փորձարկման և փոքրածավալ արտադրության ենթակառուցվածքի հիմնադրմանը: «Santé Arménie» հիմնադրամի հետ համատեղ նախատեսվում է ստեղծել կենսաբանական նմուշների բանկ, որի նպատակն է ապահովել Հայաստանի բուժհաստատությունների ակտիվ ներգրավումը միջազգային կլինիկական փորձարկումներին, ինչպես նաև խթանել հիվանդությունների զարգացման մեխանիզմների հետազոտությունը և նոր արդյունավետ բուժման մեթոդների մշակումը:

Այլ գործունեություն՝

- միջազգային և տեղական դրամաշնորհային նախագծերի ներկայացում,
- հոդվածների, դրամաշնորհային հայտերի փորձագիտական գրաքննություն (peer-review),
- ՀՀ կառավարության գերատեսչությունների ներկայացրած նախագծերի ոլորտային փորձագիտական կարծիքի տրամադրում,
- երիտասարդ կադրերի մասնագիտական հմտությունների կատարելագործում և դասավանդում:

Ակնկալվող արդյունքները. աշխատանքային պայմանների ապահովում, որոնք թույլ կտան զբաղվել այլ ֆինանսական միջոցներով (տեղական և միջազգային դրամաշնորհներ, ծառայությունների մատուցում, դրամահավաքներ և այլն) իրականացվող գիտահետազոտական և գիտակրթական գործունեությամբ, իրականացված աշխատանքների արդյունքների տպագրություն գիտական հոդվածների տեսքով Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:


Կազմակերպության
տնօրեն՝



(ստորագրություն)

(Արսեն Առաքելյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

(Արսեն Առաքելյան)



ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *


«Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	1-ին եռամսյակ
2	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	2-րդ եռամսյակ
3	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	3-րդ եռամսյակ
4	Ենթակառուցվածքի պահպանում, ընթացիկ հետազոտություններ	Շենքային, կոմունալ և աշխատանքային պայմանների ապահովում, «Մարդու, կենդանիների, բույսերի ֆունկցիոնալ և պոպուլյացիոն գենոմիկա և բջջային	Վարչարարական, փորձարարական և տեսական, գիտակրթական աշխատանք, տվյալների վերլուծություն և	4-րդ եռամսյակ

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:

	ակտիվության կարգավորում» ծրագրով նպատակադրված ընթացիկ հետազոտությունների իրականացում	ամփոփում, հոդվածների, նախագծերի պատրաստում	
--	--	---	--


Կազմակերպության
տնօրեն՝



(ստորագրություն)

(Արսեն Առաքելյան)

Ծրագրի գիտական ղեկավար՝



(ստորագրություն)

(Արսեն Առաքելյան)

